հանէին Խուլը աթոռէն տապալելէ յետոյ՝ փութաց Լեհաստան (*)։

1627 Դեկտեմբերին (**) կը հանի Կամենից և իբր լրտես կ'ամբաստանուի Նիկոլ եպս. Թորոսովիչէն և 1628ի սկիզբը կը վտարուի Պուղտանաց երկիրը, ուրկէ Կեսարացին Նիկոլի դէմ բանադրանք արձակեց և վերադարձաւ Կ. Պոլիս։

Վերոյիշեալ 1631 Յուլիս 25ին Լվովի մէջ խմբագրուած վաւերագիրին մէջ, որ ինչպէս ըսի բողոք մըն է ընդդէմ Նիկոլ Թորոսովիչի՝ ուղղուած Մովսէս Տաթեւացի կաթողիկոսին, կը խօսի Կեսարացիի առաքելութեան վրայ ի Լեհաստան, առանց խօսելու անոր վտարումին մասին։

Նիկոլ եպս.ի ձեռնադրութեան վրայ խօսելէ յետոյ, «շատ չանցած, ... Կամենից եկաւ Կեսարացի արքեպիսկոպոս Գրիգոր

(*) Հ. Գրիգոր վրդ. Գալէմքարեան (Կենսագր. Ա. էջ 29) կը գրէ թէ նախ էջմիածին գացած է եւ անկէ Լեհաստան, սակայն այս մասին տեւէ ապացոյց չկայ։ Հ. Ակինեան (ՀԱ. 1934, էջ 8) կը կարծէ թէ ուղարկուած է Մովսէս «յուսարար»էն ի նպաստ Էջմիածնի նուիրակութիւն ընելու, սակայն այս մասին ալ փաստ չկայ։

(**) Դարձեալ Գալէմքեարեան զայն Կամենից ցոյց կուտայ 1629ին, ինչ որ շատ հաւանական չի թուիր։